

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ  
ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ  
JOURNAL OF ORIENTAL STUDIES

№ 21

ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
2022

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի  
արևելագիտության ֆակուլտետի  
գիտական խորհրդի որոշմամբ**

**Խմբագրական խորհուրդ՝**

Մելքոնյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր (խմբագիր)

Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր

Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ

Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ

Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր

Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր

Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ

Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ

Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր

Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.

Տեր-Սաթևոսյան Վահրամ պ.գ.դ.

Րեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)

Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)

Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ)

Իլյա Յակուբովիչ բ.գ.դ., պրոֆեսոր (Գերմանիա)

Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### Արաբագիտություն

#### *Գոռ Գևորգյան*

ԵԳԻՊՏՈՍԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՍԻՐԻԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ  
ՆԿԱՏԱՍԱՐ. ԱԲԴԵԼ ՖԱԹԹԱՀ ԱԼ-ՍԻՍԻԻ  
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆ (2013-2019).....7-17

#### *Արամ Գասպարյան*

ԱԼԺԻՐԻ ԲԵՐԲԵՐՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ  
ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՇԱՐԺՈՒՄԸ (1962-1999 թթ.).....18-30

#### *Տարթևիկ Մկրտչյան, Միքայել Հովհաննիսյան*

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ  
ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԱՐԱԲԱԼԵԶՈՒ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ  
ԿԱՅՔԵՐՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՓՈՒԼԵՐՈՒՄ  
(2016, 2020 թթ.). ԴԻՍԿՈՒՐՍՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ.....31-49

#### *Արմինե Հակոբյան*

ԱՐՈՒ ԲԱԿՐ ԱՍ-ՍՈՒԼԻԻ «ԱԽԲԱՐ ԱԼ-ՇՈՒԱՐԱ»  
ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՍՊՈԶԻՑԻԱՆ ԵՎ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ  
ԿՈՆՑԵՊՏԸ.....50-65

#### *Մոհամմեդ Հաջ Իբրահիմ*

ԱՇԽԱՋՐԱԾՆԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԴԵՐԸ ՍԻՐԻԱԿԱՆ  
ՀԱՄԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ.....66-78

#### *Խաղիջե Ահմադ Մեհրաբի*

ՆԱԽԴԻՐՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ  
ՂՈՒՐԱՆԻ ՏԵՔՍՏՈՒՄ.....79-86

### Իրանագիտություն

#### *Անուշ Ստամբոլյան*

ԻՄԱՍ ԽՈՍԵՅՆՈՒ «ՎԵԼԱՅԱԹ-Ե ՖԱԴԻՀ»  
ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԿՐՈՆԱԿԱՆ,  
ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ.....87-97

#### *Ալեն Հայրասյետյանց*

ՆՈՐԱԳՅՈՒՏ DNF ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՎՈՐ  
ԲԱՅԱԶԵՎԻ ՍԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ՝ «ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ»,  
ԹԵ՛ ԽՈՐՀՈՒՐԴ».....98-110

*Նումիկ Դարբինյան*

ԻՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՄՈՒԹՅԱՆ ՄԵՁ ԵՎ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ  
ՀԱՆԴԻՊՈՂ ՄԻ ՇԱՐՔ ԱՐԱՐԱԾՆԵՐԻ ՇՈՒՐՁ.....111-133

*Տիգրան Չանդոյան*

ՔՐԴԱԿԱՆ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷԹՆԻԿ-  
ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԹՈՒՐԹԻԱՅԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ.....134-144

**Թյուրքագիտություն**

*Կուրադայ Ուրազանևա, Վերոնիկա Ռազունովսկայա, Ալեքսանդր Մաֆայրյան*  
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ  
ՓՈԽԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՄՇԱԿՈՒ-  
ԹԱՅԻՆ ՏՐԱՆՍՄԻՍԻԱՅԻ ՁԵՎ: ՂԱԶԱԽԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒ-  
ԹՅԱՆ՝ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ .....145-166

*Արշակ Գևորգյան*

ՍՏՎԵՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՔՐԻԴԱՅԻՆ ՑԱՆՑԱՅԻՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՐԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ.  
ԹՈՒՐԹԱԿԱՆ ԽՈՐՔԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ.....167-186

*Մարգարիտա Կրտիկաշյան*

ՏԻԳՐԱՆ ՉՈՒԽԱՉՑԱՆԻ ԴԵՐԸ ԹՈՒՐԹԱԿԱՆ  
ԵՐԱՄՇՏԱԿԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ.....187-200

*Սամվել Ռամազյան \**

ԵՎՐՈՊԱՅՈՒԲ (ՖՐԱՆԿԻ) ԿԵՐՊԱՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ  
ԹՅՈՒՐԹԱԿԱՆ ԷՊՈՍՆԵՐՈՒՄ.....201-223

*Անի Ոսկանյան*

ԱԴԱՆԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ՉՈՐՔ-ՄԱՐԶՊԱՆ ԳԱՎԱՌԱԿԻ  
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ.....224-238

\*\*\*

*Ռուսլան Յականյան*

ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ  
ԽՆԴԻՐՆԵՐԸ (ԳԵՐԵՐԿԱՐ, ԵՐԿԱՐ, ՄԻՋԻՆ,  
ԿԱՐՃ ԵՎ ԳԵՐԿԱՐՃ ԹՎԱԳՐՈՒՄՆԵՐ).....239-247

*Հովհաննես Խորիկյան*

ԿԱՊԱՐՈՎԿԻԱՅԻ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐՆ  
ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ.....248-261

## CONTENT

### Arabic Studies

*Gor Gevorgyan*

EGYPT'S POSITION ON THE SYRIAN CRISIS: DURING THE  
PRESIDENCY OF ABDEL FATTAH AL-SISI.....7-17

*Aram Gasparyan*

ALGERIAN BERBERS MOVEMENT FOR THE PRESERVATION OF  
NATIONAL IDENTITY (1962-1999).....18-30

*Tatevik Mkrtchyan, Mikayel Hovhannisyan*

COVERAGE OF THE NAGORNO-KARABAKH CONFLICT IN  
ARABIC-LANGUAGE MEDIA DURING BOTH WAR  
PERIODS (2016, 2020): DISCOURSE ANALYSIS.....31-49

*Armine Hakobyan*

COMPOSITION AND AUTHOR FUNCTION OF ABU BAKR  
AS-SULI'S "AKHBAR AL-SHU'ARA".....50-65

*Mohammed Haj Ibrahim*

THE ROLE OF HYDROCARBON RESOURCES IN  
THE CONTEXT OF THE SYRIAN CONFLICT.....66-78

*Khadije Ahmad Mehrabi*

THE PROBLEM OF ALTERNATION OF PARTICLES  
IN THE TEXT OF THE QUR'AN.....79-86

### Iranian Studies

*Anush Stamboltsyan*

THE RELIGIOUS, HISTORICAL AND POLITICAL  
PRINCIPLES OF IMAM KHOMEINI'S "VELAYAT-E FAQIH"  
DOCTRINE.....87-97

*Alen Hayrapetyanc*

THE INTERPRETATION OF THE "MYSTERIOUS" VERB FORM OF  
THE RECENTLY DISCOVERED DNF INSCRIPTION:  
"BLESSING OR ADVICE?".....98-110

*Noonik Darbinian*  
SOME CREATURES FOUND IN IRANIAN FAIRY  
TALES AND FOLKLORE..... 111-133

*Tigran Candoyan*  
ETHNO-GEOGRAPHIC BOUNDARIES OF KURDISH  
NATIONALISM IN THE TERRITORY OF  
THE REPUBLIC OF TURKEY..... 134-144

**TurkicStudies**

*Urazaeva K.B., Razumovskaya V.A., Safaryan A.V*  
LITERARY TRANSLATION AS A TYPE OF CULTURAL  
TRANSMISSION IN SOCIAL TRANSFORMATIONS  
CONTEXT. ABOUT KAZAKH LITERATURE  
TRANSLATIONS INTO ARMENIAN..... 145-166

*Arshak Gevorgyan*  
THE PARAPOLITICAL PERCEPTION OF THE HYBRID  
NETWORK STRUCTURES OF SHADOW GOVERNANCE:  
THE TURKISH DEEP STATE..... 167-186

*Margarita Krtikashyan*  
THE ROLE OF TIGRAN CHUKHAJIAN IN  
THE TURKISH MUSIC SCENE..... 187-200

*Samvel Ramazyan*  
THE PERSONAGE OF EUROPEAN (FRANK)  
IN ARMENIAN AND TURKIC EPICS..... 201-223

*Ani Voskanyan*  
ABOUT THE PECULIARITIES OF ECONOMIC LIFE IN  
THE CHORK-MARZPAN SUB-DISTRICT,  
ADANA PROVINCE..... 224-238

\*\*\*

*Ruslan Tsakanyan*  
CHRONOLOGICAL PROBLEMS OF ASSYRIAN HISTORY  
(EXTRA-LONG, LONG, MIDDLE, LOW,  
ULTRA-LOW DATES)..... 239-247

*Hovhannes Khorikyan*  
THE TERRITORY AND BOUNDARIES OF CAPPADOCIA  
IN ACHAEMENID PERSIA..... 248-261

ՆՈՐԱԳՅՈՒՏ DNF ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՎՈՐ  
ԲԱՅԱՁԵՎԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ՝ «ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՞  
ԽՈՐՀՈՒՐԴ»

*Բանալի բառեր՝ Նաղշ-է Ռոսթամ, Պատիժահար, հին պարսկերեն, ավեստերեն, սեպանշան, սեպագիր արձանագրություն, զարդաքանդակային համալիր*

Հոդվածում վերանայված են վերջերս հայտնաբերված աքեմենյան նկարագիր-արձանագրություններից մեկի՝ DNF-ի ընթերցմանը նվիրված ուսումնասիրությունները: Ցարդ առաջադրված առավել հավանելի տարբերակի հիման վրա փորձ է արվել նորովի մոտենալ քննվող զարդաքանդակային համալիրի ենթատեքստի վերլուծությանը:

Իրանի Ֆարս նահանգում՝ Պերսեպոլից 6 կմ հյուսիս-արևմուտք գտնվող Հոսեյն Քուհ (թրգմ. «Հոսեյնի լեռ») կոչվող ժայռի հարավային ճակատին պատկերված ցայտաքանդակային համալիրը՝ հանրահայտ ժողովրդական Նաղշ-է Ռոսթամ (Ռոսթամի պատկերը) անվամբ<sup>2</sup>, աքեմենյան և սասանյան հուշակոթողների, ինչպես նաև հին լեզուներով ավանդված մի շարք արձանագրությունների յուրօրինակ գանձարան է: Ժայռի երեսին փորված 4 դամբարաններից առաջինը, որի պատկանելությունը Ղարեհ Ա արքային աներկբայորեն հաստատված է սեպագրային

<sup>1</sup>ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի մագիստրանտ, էլ. փոստ՝ [a.hayrapetyants@gmail.com](mailto:a.hayrapetyants@gmail.com)

<sup>2</sup> Von Gall, Naqš-e Rostam, 2009, Eir/ <https://iranicaonline.org/articles/naqs-e-rostam> (24.09.2020):

նյութով<sup>3</sup>, պարունակում է 6 արձանագրություն՝ հետևյալ պիտակավորմամբ՝ DNa, DNb, DNC, DNd, DNe և DNf (տե՛ս նկ. 1): Վերջին՝ DNf եռալեզու արձանագրությունը հայտնաբերվել է վերջերս՝ 2018 թ. հոկտեմբերին, երբ Մ.Դորուդին լուսասնկարիչ Մ.Ա.Սոսալանեժադի հետ այցելեց Նաղշ-է Ռոսթամ և նկատեց մինչև այդ մնացած արձանագրությունը՝ տեղակայված դամբարանի վերնամասի աջ անկյունում գտնվող քանդակի գլխավերևում:

### Արձանագրության բովանդակությունը, հիմնական քննարկում

Արձանագրությունը բաղկացած է 4 տողից, երկուսը՝ հին պարսկերենով, որին հաջորդում են էլամերեն և բաբելոներեն տարբերակները մեկական տողով: DNC, DNd և DNe կարճ արձանագրությունների նմանությամբ DNf-ում տրված է քանդակում պատկերված անձի նկարագիրը: Արձանագրության ձախ հատվածը վնասված է, ինչի հետևանքով անհայտ է մնում քանդակում պատկերված անձի անունը: Գրադարձված տարբերակը ներկայացնում ենք ստորև՝

1.[x-x-x(-x) : p-a-t-i]-š-u-v-r-i-š : d-a-r-y-v-h-u-

2.[š : x-š-a-y-θ-i-y]-h-y-a : a-f-r-[?]-a-t-i-y

Անվանը հաջորդող բառը, որի վերջնաբաղադրիչն է պահպանվել միայն, վերականգնվում է որպես \*patišvariš՝ «պատիժահարցի»<sup>4</sup> DNC արձանագրության հետ համեմատության

<sup>3</sup>Նաղշ-է Ռոսթամի սեպագիր արձանագրությունների հին պարսկերեն տարբերակի թարգմանության և մեկնաբանության համար տե՛ս Schmitt R., The Old Persian Inscriptions of Naqsh-e Rostam and Persepolis. Corpus Inscriptionum Iranicarum I.II. London, 2000:

<sup>4</sup> Հ.պ. Pātišvari՝ «Պատիժահար» կամ «պատիժահարցի» < \*Pātišvari- ձևից ՝ բոց. «դեպի արևը շրջված», հմմտ. հուն. Πατισχορεις հիբրիդային ձևը, բաբ. Pa-id-di-iš-hu-ri-iš, որի հիմքի վրա Լուրնցկին տալիս է \*Pātišvari վերականգնումը, մ.պ. ptšhw՝1, տե՛ս Schmitt R. Wörterbuch der Altpersischen Königsinschriften, Wiesbaden, 2014, էջ 233: Չի բացառվում նաև նույնանուն հասարակ անվան գոյությունը, օրինակ հայ. «արևկող»-ը որպես ածական և «Արևկող» որպես տեղանուն: Մովսես Խորենացին հիշատակում է «Պատիժահար գավառ, որ Գեղումների լեռն է » (Մտր. Բ:ձգ):



շնորհիվ<sup>5</sup>: Երկրորդ տողի սկիզբնամասը անկասկած «Dārayavahauš»՝ Դարեհի անվան վերջնատառն է xšāyaθiya «արքա» բառի կապակցությամբ: Արձանագրության խնդրահարույց կետը a-f-r-[?]-a-t-i-y բառաձևն է , որի միջնամասում առաջացած վնասվածքի պատճառով բացակայում է արձանագրության ընթերցման համար մեծ կարևորություն ունեցող 4-րդ սեպանշանը:

a-f-r-[?]-a-t-i-y ձևի մեկնաբանության համար առաջարկվել են հետևյալ տարբերակները.

1. a-f-r-[y]-a-t-i-y \*ā-fra-yāti «նա առաջ է գալիս»: Այս թարգմանության թերությունը, ըստ Դելշադ-Դորուդիի ā-fra բայածանցների կցումն է հ.պ.-ում վկայություն չունեցող «yā»՝ «գնալ» արմատին, որի վեդայական գուգահեռը՝ ā- .... Pra yāhi՝ «առաջ գնա» (RV 7.24.1) կարող է բնասատեղծական հանգով պայմանավորված շրջուն շարադասության օրինակ լինել<sup>6</sup>: Բացի նշված հանգամանքից առաջարկվող բայաձևը ըստ էության անհամատեղելի է արձանագրության էլամաբաբելական թարգմանության հետ: Այսուամենայնիվ, Բ.Շմիտտի համաձայն սա

---

Խորենացու «Պատմության» առաջին թարգմանիչները, «պատիժահարը» դիտելով որպես հայկական կազմություն, այն թարգմանել են լատ. poenālis՝ բռց. «պատժական» եզրով, տե՛ս Հովհաննիսյան Լ.Շ., Բառերի մեկնությունները հինգերորդ դարի հայ մատենագրության մեջ, Երևան, էջ 126: Հայերեն «Պատիժահարի» ճ > շ անցումը կանոնավոր է իրանական փոխառությունների համար, հմմտ. դժխեմ < duš-xēm, դժկամ < duš-kām, դժվար < duš-vār և այլն: Այսպիսով, թե՛ լեզվաբանորեն, և թե՛ աշխարհագրորեն դիտարկվող եզրը իրանական է, և հետևաբար Ս.Պետրոսյանի փորձը այն բացատրելու որպես «իժ» և «հար» արմատների միացություն (տե՛ս Պետրոսյան Ս., Հայ-շումերական առասպելաբանական աղերսների շուրջ, ԾՀՀԿԳԱ XIV, 2011, էջ 5-6) խախուտ է և անհաջող: Չրադաշտական ավանդույթը հանձին «Բունդահիշն»-ի «Պատիժահարը» տեղադրում է Թաբարեստանում՝ Գիլանի շրջակայքում: Հ. Խորիկյանի կարծիքով այս տարածքում հավանաբար բնակություն են հաստատել գելերը, տե՛ս Խորիկյան Հ., Մարաստանի էթնիկական կազմի շուրջ: Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Հատոր XXXII, Պրակ Ա, Երևան, 2019, էջ 62:

<sup>5</sup>Doroodi M., Delshad S., DNF: A New Inscription Emerges from the Shadow, Arta 2019.001, p. 5.

<sup>6</sup>Նույն տեղում, էջ 6, ծան. 8

ընթերցանության լավագույն և ամենաընդունելի տարբերակն է<sup>7</sup>: Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները, ինչպես նաև արձանագրային համալիրի, հատկապես՝ DNc և DNd ծանոթագիր-արձանագրությունների հետ համեմատության համատեքստում «??? առաջ է գալիս դեպի Դարեհ արքան» թարգմանության թերիմաստ և բովանդակագուրկ բնույթը, մեկնաբանության այս տարբերակը կարելի է բացառել :

2. a-f-r-[θ]-a-t-i-y` ā-fra-θāti` «ասում է, խոսքով դիմում է»: Ընթերցանության թերությունը ā- և fra- ածանցների և «“θā-»՝ «խոսել» արմատի անօրինակ միացությունն է:

3. a-f-r-[n]-a-t-i-y` āfər/ʔnātiy` «օրհնում է»: Ի սկզբանե այս տարբերակը դիտարկվել է Դելշադ-Դորուդիի համատեղ հոդվածում որպես ամենահավանականը իմաստաբանական, ինչպես նաև բաբելոնական տարբերակում վկայված ikarrabi-ի հետ համապատասխանության տեսանկյունից, եթե, իհարկե, արձանագրության վնասված հատվածը հնարավորություն ընձեռներ քննվող բայաձևի հատվածում երկու՝ I n [i-n] սեպանշան տեղավորելու<sup>8</sup>: Հետևաբար āfər/ʔnātiy տարբերակը ինքնաբերաբար ընկնավ, մինչև Մ. Կումմելի հոդվածի լույս տեսնելը<sup>9</sup>, որտեղ հեղինակը իրանական xir-, bor-, fri- արմատների համար առաջարկում է ներկայի հիմքի \*xərn \*bərn \*āfərn վերականգնումները, և այսպիսով հետ է քաշվում նաև երկու սեպանշանի խնդիրը<sup>10</sup>, քանի որ վանկային /ʔ/ և /r/ հնչյունները հ.պ.

<sup>7</sup> Schmitt R., Überlegungen zu zwei neuen Altpersischen Inschriften, NARTAMONGÆ, Vol. XIV, N 1,2, Vladikavkaz, 2019, p. 48.

<sup>8</sup> Doroodi M., Delshad S., DNF: A New Inscription Emerges from the Shadow, Arta 2019.001, էջ 6, ծան. 7.

<sup>9</sup> Kümmel, M., Analogie oder Lautgesetz? Zur Erklärung von Mittelpersisch [sic] burr- ‘schneiden’, xirr- ‘kaufen’, āfurr- ‘seggen’ und altpersisch a-f-r-[?]- DNF 2. Handout bei der 27. GeSuS-Jahrestagung Sprach(en)forschung: Disziplinen und Interdisziplinarität, Warschau, 2019, 1–8.

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 4-5:

սեպագրային համակարգում արտահայտվում են միննույն՝ r նշանով: Շմիտտի համաձայն անհայտ բառի նման ընթերցումը անընդունելի է, քանի որ ավեստերենում √fr արմատով կազմված բայաձևերը պահանջում են ուղիղ խնդիր<sup>11</sup>, սակայն ինչպես ցույց են տվել Դելշադը և Դորոուդին վերանայված հոդվածում, √fr արմատի խնդրառական ծավալը չի սահմանափակվում միայն ուղիղ խնդրով: Որպես ապացույց վկայաբերվում է Վենդիդադի 22,5 հատվածը՝ *uta tē āfrīnāni srīra dahma āfriti*՝ «և քեզ երկրպագելու եմ գեղեցիկ աղոթքով», որտեղ *tē* դերանունը սեռ.-տր. հոլովով է դրված<sup>12</sup>: Վերջինիս կարող ենք հավելել նաև հետևյալ.

<i>āat. yō. nā. hīš.1 frāiiāzāite.</i>	Այն մարդը ով նրանց
<i>gaomata. zasta. vastrauata.</i>	ընծայաբերում է ձեռքերում
<i>aša.nāsa.2 nəmaṅha.</i>	(պահած) կաթով և հագուստներով,
<b>ahmāi</b> (Յրդ.դ. <b>հոգն.սեռ.-</b>	մեծարանքի դարպասներով
<b>տր).</b> <i>āfrīnəṅti...</i>	կհասնի բարձրագույն
	ճշմարտության(?),
	<i>նրան</i> (սեռ.-տր.) են մեծարում (Yt 13.51)...

#### 4. Վկայությունը.

Այս ամենով հանդերձ *āfər/ṛnātiy* տարբերակը, մեր կարծիքով, սակավ հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ.

□ Անգեն աչքով արձանագրության լուսանկարի մանրակրկիտ զննումը կասկածի տակ է դնում այստեղ *n* նշանի գոյության վարկածը<sup>13</sup>(տե՛ս նկար 2): Վնասված հատվածում

<sup>11</sup>Schmitt R., Überlegungen zu zwei neuen Altpersischen Inschriften// NARTAMONGÆ, Vol. XIV, N 1,2, Vladikavkaz 2019, էջ 47:

<sup>12</sup>Doroodi M., Delshad S., Katibe-i dar Sāye (Katibe-ye noyāfte-ye Haxāmaneši mousum be DNf), Zabān ha va gūyeshā-ye Irāni 11, 2020, p. 13.

<sup>13</sup>Հնագիտության մեջ լայնորեն կիրառվող վերլուծական համակարգչային մեթոդաբանության(3D սկանավորում (տե՛ս օրինակ <http://www.digitalepigraphy.org/> (10.10.2022)), համակարգչային շերտագրություն (տե՛ս Hughes St., CT in Archaeology: Computed Tomography, Special Applications, Cagliari, 2011) և այլն) գոյության պայմաններում, ինքնին հասկանալի է բերվող փաստարկի պայմանականությունը: Բարձր թույլատրման

ուղղահայաց սեպ պարունակող նշանի գոյությունը թվում է առավել հավանական:

□ Ավ.  $\sqrt{fri} / \sqrt{frae}$  [հրճվել, հաճոյանալ] արմատը հանգում է \*fri-H/ \*fraiH < \*f<sub>1</sub>h \*preiH ձևին. \*ā- նախածանցի միացմամբ՝ [օրհնել]<sup>14</sup>, հմմտ. Մմպ. ‘fryn-, մ.պ. ‘plyn-, ‘fwr-, ‘pwr-, պարթ. Fryh, խոտ. briya-՝ «սիրելի», ն.պ. āfarīdan / āfarīn-՝ [ստեղծել, երկրպագել]<sup>15</sup>: Ավետերենում դիտարկվող բայահիմքային (կոկորդային H-ով վերջացող) տիպը ներկայի ձևը կազմում է արմատի զրո աստիճանին \*n(a) միջածանցի կցմամբ՝ ածանցի ձայնադարձով (+H)<sup>16</sup>, հմմտ. Kərənao- / kərənu- <  $\sqrt{kar}$  [անել], mərənak- / mərənk- <  $\sqrt{mark}$  [կործանել]: Ակներև է ավ. kərənaomi (ն.ան.1եզ), mərəncaite (ն.ան.3եզ. չեզոք.) ձևերի հակադրությունը դիտարկվող āfīnāmi ձևին, ինչից հետևում է, որ ամենայն հավանականությամբ այստեղ գործ ունենք –rī- հնչյունակապակցության հետ: Այս միտքը ամրապնդվում է նաև վոկալային –r- հնչյունով հանդիպող համանուն բայաձևի գոյությամբ, հմմտ. frVrənaoT (Y 11.4, Y 13.146)՝ «ուղարկեց» < \*fra- $\mathfrak{r}$ (a)u ձևից<sup>17</sup>: Ընդունելով հին պարսկերենի և ավետերեն տեքստերի կազմության համաժամանակության թեզը<sup>18</sup>, կարծում

յուսանկարների առկայությունը կարող էր հնարավորություն տալ 3D սկանավորման եղանակով առավել ճշգրիտ դիտարկումներ իրականացնել:

<sup>14</sup>Հայ. արի(-ել) < ā-frih իրանական փոխառություն է նույն արմատից ( տե՛ս Ջահուկյան Գ.Բ., Հայոց լեզվի պատմություն: նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 518):

<sup>15</sup>Cheung J., Etymological Dictionary of Iranian Verb, Vol 2, Leiden, 2007, p. 87.

<sup>16</sup>Ավետերենում \*nī < \*-n-H-ով ձևեր բայացկայում են, ինչի արդյունքում հանդիպում են միայն –nā-/ -n- հերթագայությամբ հիմքեր, հմմտ. Նավ. frī-nā-ti, frī-n-ənti (տե՛ս Toshifumi Gotō, Old Indo-Aryan Morphology and its Indo-Iranian background, Wien, 2013, p. 106):

<sup>17</sup>De Vaan M. (2003), The Avestan Vowels: Leiden Studies in Indo-European 12, Amsterdam-New York 2003, p. 501.

<sup>18</sup>Kellens J., “AVESTA i. Survey of the history and contents of the book,” Encyclopaedia Iranica, III/1/<http://www.iranicaonline.org/articles/avesta-holy-book> (10,10,2022), տե՛ս նաև Skjærvø P.O., The Antiquity of Old Avestan. Nāme-ye Irān Bāstān. The International Journal of Ancient Iranian Studies 3, 2003, p. 26-35.

ենք, հին պարսկերենի համար նույնպես –I < \*-ai- < \*i-H ով վերականգնումը առավել հիմնավոր է, ինչը ամրապնդվում է հետևյալ գուգահեռներով՝

□

Հին պարսկ	Ավեստերեն	Հին իրան	Թարգմ.
dī-	d(a)i-/	*daiH	[տեսնել]
ji-	ji(i)-	*jaiH	[ապրել]
mīθa <sup>h</sup>	vīmīti	*maiH	[վնասել]

Ի լրումն վերը ասվածին, կարելի է ենթադրել, որ հին պարսկերենում \* āfərəna-ն kunautiy / \*tunautiy / \*čunautiy<sup>19</sup> ձևերի համաբանությամբ կարող էր հանդես գալ \*āfunatīy տեսքով: Այս ամենից հետևում է, որ Կումմելի կողմից առաջարկված տարբերակը նույնպես ընդունելի չէ:

5. a-f-r-θ-a-t-i-y` ā-fraθātīy(ըղձական աորիստ, Յդ.եզ.)՝ «խորհրդակցում է, խորհուրդ է անում»: < հ.իր. fras/prs < հեվ. \*prek`՝ հարցնել, հմնտ. հայ. Եհարց, հ.սլավ. просити, լատ. poscō, հ.ավ. pərəṣā և այլն: Այս տարբերակը՝ առաջարկված Օ. Լիգորիոյի կողմից<sup>20</sup>, բավարար ուշադրության չի արժանացել հարցի քննությամբ զբաղվող գիտնականների շրջանում: Այսուամենայնիվ այն, ի տարբերություն նախորդ ընթերցումների, զերծ է գրաբանական, հնչյունաբանական, ինչպես նաև իմաստային թերություններից: Միակ թերությունը, թերևս, ըղձականի գործածությունն է, որը մի կողմից հակադրվում է DNd արձանագրության բայ-ստորոցյալին (dārayatīy)՝ դրված

<sup>19</sup> Մանրամասն այս մասին տե՛ս Kent R. Voacalic r in Old Persian before n. Language, Vol. 18, No. 2, 1942, p. 79-82:

<sup>20</sup> Ligorio O. Novootkriveni staropersijski natpis iz Nakše-Rustama (DNf, 2019): analiza, interpretacija, značaj. [The Newly Discovered Old Persian Inscription from Naqsh-e Rostam (DNf, 2019): Analysis, Interpretation, Significance.] Filozofski fakultet, Beograd RS. 10. april 2019. (Handout.) Lecture not published in print., էջ 9:

սահմանական ներկա ժամանակաձևով, սակայն մյուս կողմից մերձենում է վերջինիս շարահարական բնույթի կառույցով<sup>21</sup>

DNd		DNf
Aspacanā	vaçabara	[x-x-x-x(-x) : pāti]šuvariš :
Dārayavahauš	xšāyaθiyahyā	Dārayavahau
isuvām dārayatiy		š :xšayaθiya]hyā : āfraθātiy
Ասպատիները՝ աղեղնավոր,		x-x-x-x(-x)
(որ) պահում է Դարեհի		Պատիժահարցի (որ) խորհուրդ
սակրը		տա Դարեհ արքային

### Քանդակները նոր լույսի տակ

Ընդգծելով ընթերցման առաջարկվող տարբերակի համապատասխանությունը զարդաքանդակային համալիրի իմաստաբանական համատեքստին (ի տարբերություն \*ā-fra-yāti ձևի), պետք է նաև նշենք, որ այն թույլ է տալիս նոր լույսի տակ մոտենալ Դարեհի դամբարանի վերին հատվածում տեղակայված քանդակների վերլուծությանը: Հարցին անդրադառնալիս Վ. Հինցը գրում է. «Իմ ընկալմամբ, այս մեծատոհմիկները ձեռքը բերանին են մոտեցրել, որպեսզի զերծ պահեն Սուրբ Կրակը պղծվելուց, որի անմիջական հարևանությամբ էին կանգնած»<sup>22</sup>: Է. Շմիդտի կարծիքով աջ հատվածի տեսարանը՝ ձախ ձեռքը դեպի բերանը բարձրացրած անձանց մասնակցությամբ, խորհրդանշում է ողբի տեսարան<sup>23</sup>: Իրականությանը ավելի մոտ է Մ.Ռուրթի տեսակետը,

<sup>21</sup> Շարահարային կառույցով միացությունները(անգլ. asyndetic parataxis) հաճախակի են հանդիպում հին պարսկերենում, հմմտ. DB 3.91-92, DB 4.43-45, A2Sa4, XPf 21-25: Հայտնի է մի քանի օրինակ նաև ավեստերեն տեքստերից՝ Yt 5.85, Yšt 5.62 (մանրամասն այս մասին տե՛ս Hintze A., Parataxis and Hypotaxis in the Avesta: Syntaxe des langues Indo-Iraniennes Anciennes, Barcelona, 1993, pp. 57-58):

<sup>22</sup> Hinz W., Altiranische Funde und Forschungen, Berlin, 1969, p. 63, ծան. 4:

<sup>23</sup> Schmidt E, Persepolis: III – The Royal Tombs and other Monuments, Oriental Institute Publications 70, Chicago, 1970, p. 87:

որը ընթերցողի ուշադրությունը հրավիրում է այն հանգամանքին, որ բոլոր պատկերաքանդակները նայում են դեպի թագավորը՝ որպես ցուցաբերված մեծարանքի և հարգանքի արտահայտություն<sup>24</sup>: Մյուս կողմից արժանահիշատակ է նաև Շ. Շահբազիի կողմից արված նկատառումը քանդակային համալիրի հորինվածքի մի հետաքրքիր կառուցվածքային առանձնահատկության վերաբերյալ: Հեղինակի համաձայն Դարեհի քանդակի կենտրոնական դիրքը, ինչպես նաև նրանից ներքև հերթականությամբ դասավորված 6 քանդակները ուղղակիորեն ակնարկում են Ահուրամազդայի և նրա 6 «արտահոսումների»՝ ամահրասպանդների ստորակարգային առանձնահատկության մասին, ինչը ամրապնդվում է նաև հանգունակ զարդապատկեր պարունակող և աքեմենյան շրջանով թվագրվող մի ականջողի գոյությամբ<sup>25</sup>: Զարգացնելով այս թեզը, ինչպես նաև հաշվի առնելով նորագյուտ արձանագրության վերոքննարկված բայաձևի թարգմանությունը, կարելի է եզրակացնել, որ 6 ազնվականներին պատկերող քանդակներում կարելի է տեսնել նաև *ռազմական և խորհրդական թների երկակի բաժանման արտացոլում*, ինչը առաջնահերթորեն հաստատվում է ձախ հատվածի երեք քանդակների մոտ զենքի առկայությամբ՝ ի հակադրություն աջ կողմի քանդակների: Գաումատային պարտության մատնելու գործում Դարեհին աջակցած 6 ազնվականներից երեքը (հայտնի է միայն Գոբրիասի և Ասպատինեսի անունը), այսպիսով, ռազմական թևի ներկայացուցիչ էին, որոնց քանդակներում ընդգծված է նաև թագավորի և նրա մերձավորների անվտանգությունը ապահովող

<sup>24</sup> Root M., The King and Kingship in Achaemenid Art, Acta Iranica 19, Leiden, 1979, pp. 178-179:

<sup>25</sup> Shahbazi A.S., An Achaemenid Symbol, II Farnah (“God Given Fortune Symbol”). AMI 13, 1980, pp. 124-125.

արքունի պահապանների ինստիտուտի կարևորությունը<sup>26</sup>: Որպես ռազմական թևի եռանդամ խմբի զուգահեռ կարող է ծառայել Պերսեպոլսի հարավային տաղավարի պատին քանդակված «Մարական» պահապանների զարդաքանդակը (տե՛ս նկար 3): «Խորհրդական» թևի մասին խոսելիս տեղին է հիշել Բ. Մեգալլի հետևյալ միտքը՝ բերված Մ. Քուլի ուսումնասիրության մեջ.

«Կյուրոս Բ-ի իշխանության գալուն նախորդող շրջանում քաղաքական և կրոնական գաղափարները այնքան սերտորեն էին միահյուսված, որ դիտարկել մեկը առանց մյուսի անհնար է: Հավատալիքները և առասպելները օրօրի առավել կենսական՝ արքաների՝ մեծ շրջահայությամբ մշակված աստվածաբան խորհրդականների համակարգի համար...»<sup>27</sup>:

Այս համատեքստում բավական ուշագրավ է Հերոդոտոսի՝ կառավարման երեք ձևերի մասին գրույցը (Հեր. III. 80-82): Պատմահոր համաձայն Գաուսատա մոզին տապալելուց հետո յոթ մեծատոհմիկ պարսիկները հավաքվեցին խորհրդակցության, որոնցից երեքը՝ Օթանեսը, Մեգաբիզոսը և Դարեհը առաջարկեցին քաղաքական ստեղծվող համակարգի իրենց տեսլականը: Օթանեսը հանդես եկավ ժողովրդավարության, Մեգաբիզոսը՝ սակավապետության, իսկ Դարեհը՝ միապետության կողմից: Չնայած այս հատվածը ակնհայտորեն անցել է դասական հունական քաղաքական մտքի պրիզմայով<sup>28</sup>, այնուամենայնիվ իրականության տարր է պարունակում այն առումով, որ համենայն դեպս Դարեհը և նրա աջակիցները կանգնած էին իշխանության ձևավորման հիմնառանցքային խնդրի առաջ, և նրանցից երեքը, լինելով Դարեհի անմիջական խորհրդականները, նշանավորվել են

<sup>26</sup> Calmeyer P., *Textual Sources for the Interpretation of Achaemenian Palace Decorations*, Iran, Vol. 18, 1980, p. 59.

<sup>27</sup> Root M., *The King and Kingship in Achaemenid Art*, Acta Iranica 19, Leiden, 1979, p. 39:

<sup>28</sup> Суриков И.Е., Парадоксы «Отца Истории»: Геродот-Исследователь архаической и классической Греции, RGGU Bulletin N 10(53)/10, Moscow, 2010, стр. 88.



այս հարցում գաղափարական զգալի ներդրմամբ, մինչդեռ մնացածը, լինելով հնուտ հրամանատարներ<sup>29</sup>, հիմնականում զբաղված էին տարածքային նվաճումներով, ինչն էլ պատկերում է Նաղշ-է Ռոսթամի քանդակային համալիրը:

Այսպիսով, հիմնվելով ավեստերենի լեզվանյութի վրա, մեր կողմից առավել ընդունելի է համարվում *a-f-r-θ-a-t-i-y ā-fraθātiy* վերականգնումը, որի հիմքում հելվ. \**prek*՝ «հարցնել» արմատն է, իսկ արձանագրության քննարկվող բայաձևը կարող է թարգմանվել որպես «խորհրուրդ է տալիս», ինչը թույլ է տալիս նորովի մոտենալ Նաղշ-է Ռոսթամ քանդակային համալիրի այս հատվածի քնադակների իմաստաբանական ենթատեքստին՝ քնադակներում պատկերված պատմական կերպարներին դիտարկելով որպես «խորհրդական» և «հրամանատարական» դասի ներկայացուցիչներ:

**THE INTERPRETATION OF THE “MYSTERIOUS” VERB FORM  
OF THE RECENTLY DISCOVERED DNF INSCRIPTION:  
“BLESSING OR ADVICE?”**

*Alen Hayrapetyanc*

**(Summary)**

In this paper recently discovered inscription, labeled DNf is revisited. Considering all the previous interpretations of the damaged part of the inscription and by underlining the most possible one, a new approach was taken towards the context of the studied rock reliefs.

---


<sup>29</sup> Ելնելով այս թեզից անհրաժեշտ է նաև վերանայել DNf-ում նկարագրվող անձի նույնականացումը Օտանեսի հետ՝ առաջարկված Շմիտտի կողմից: Stéu Schmitt R., Überlegungen zu zwei neuen Altpersischen Inschriften // NARTAMONGÆ, Vol. XIV, N 1,2, Vladikavkaz 2019), քանի որ ըստ Հերոդոտոսի հաղորդման, մ.թ.ա. 517 թ.-ին պարսկական բանակը նրա գլխավորությամբ գրավեց Սամոս կղզին (Հ՝ 3,139-149):

## ИНТЕРПРЕТАЦИЯ “ТАИНСТВЕННОЙ” ГЛАГОЛЬНОЙ ФОРМЫ В НЕДАВНО ОБНАРУЖЕННОЙ НАДПИСИ DNF: “БЛАГОСЛОВЕНИЕ ИЛИ СОВЕТ?”


*Ален Айрапетянц*

(резюме)

В данной статье рассмотрена проблема чтения и интерпретации недавно обнаруженной надписи, помеченной как DNF. Принимая во внимание все попытки чтения надписи до настоящего времени, и выделяя наиболее приемлемые из них, нами был предпринят новый подход к интерпретации контекста барельефов данного археологического комплекса.



Նկար 1 Նաղշ-է Ռոսթամ դամբարանի նախազիծը



Նկար 2 DNF արձանագրության լուսանկարը



Նկար 3 «Մարական» պահապանները քանդակը Պերսեպոլիսի հարավային տաղավարի պատին